

8062

ԿՈՒԹԻՒՆ «ՀԱՍԿԵՐ» ԱՄՍԱԳՐԻ

№ 10.

Ա Ս Պ Ո Ւ Ս Ն

ՖԻԾՐԵ ՓԵՐԻՆ

Ա Ս Պ Ո Ւ Ս Ն

Հեթիաքներ



Թ Ի Ց Լ Ի Ս

ԷԼԵԿՏՐԱԿԱՐԳ ՏՈՎԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՐԱՆԵԱՆՑԻ. ՊՈԼԻՏ 7

1910

19 NOV 2010

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ՀԱՍԿԵՐ» ԱՄՍԱԳՐԻ

85
4-24

№ 10

ԱՅ

ԿԱՊՈՒԱՆ

ՖԻԾԵ ՓԵՐԻՆ

ԱՍԵՂ

1009
1008
1007
1006

Հեթաքնիր

Թարգմ. Աս. Լիս.

— — —

ԹԻՖԼԻՍ

ԷԼԵԿՏՐԱԿԱՐ ՏԵՂՄԱՆ ՕՐ. Ն. ԱՐԱՆԵԱՑԻ. ՊԱԼԻ 7

1910

17.05.2013

8062

ՖԻՇԻ ՓԵՐԻՆ

Լինում են չեն լինում, երկու հարազատ քոյ-
րեր են լինում, պստիկուց որբացած։ Մեծը գե-
ղեցիկ է լինում՝ պայծառ արևի պէս, բարձրահա-
սակ և կոկիկ՝ բարդու պէս, խիտ, երկար, ոս-
կեգոյն ծամերով։ Փոքրն էլ թէև ոչ նրա չափ
գեղեցիկ է լինում, բայց ոչ էլ շատ տգեղ, —
կարճահասակ, նիհար և մի ոտքը կաղ։ Քոյրը
նրան միշտ «կաղլիկ» է կանչելիս լինում։

Պառաւ տատը, որ թոռներին իր տունն էր
առել, շատ անդամ ասում էր մեծին, որ այդպէս
չը կանչի իր քոյրիկին։

— Խեղճը միթէ մեղաւոր է որ կաղ է։ Կաւ
չէ որ միշտ նրա երեսովն ես տալիս այդ պա-
կասութիւնը։

— Միթէ ճշմարիտ չեմ ասում, որ կաղ է։
Ես հօ ինձնից չեմ հնարում։

Եւ չար աղջիկը սկսում էր այս խօսքերի
վրա ծիծաղել։

Բան չը կայ, թող ծիծաղէր, «կաղլիկ»
կանչէր։ Փոքրը ուշք չէր դարձնում նրա խօս-
քերի վրա, կարծես իր մասին ասելիս չը լինէր։

Ամենից վատն այն էր, որ մեծ քոյրը ոչթէ լեզւով, այլ գործով էլ նրան միշտ վշտացնում էր:

—Կաղլիկ, այս արա, այն արա... Կաղլիկ, արի այստեղ... Կաղլիկ, վազիր այս ինչ տեղ, ինձ համար այս ինչ բանը բեր...

Մի ըոպէ հանգիստ չէր տալիս խեղճին: Իսկ ինըը որ ասես բան չէր շինում, չէր ուզում իր փափլիկ, սպիտակ ձեռները կեղտոտի: Կամ հայելու մէջ էր նայում, կամ լուսամուտին տիտիկ անում, թէև տատը յաճախ դրա համար նրան յանդիմանում էր:

—Ետ ում ճամփան եռ պահում, որ էտոեղ բազմել ես:

—Թագաւորի տղին,—ասում էր աղջիկը:

Եւ այս խօսքերը նա բոլորովին հանաքով չէր ասում: Վաղուց է որ մաքում դրել էր, որ թագաւորի որդին, որը իրենց տան առջնից էր անցնում որս գնալիս, մի օր անպատճառ պիտի իրեն նկատի, իր գեղեցկութիւնից հիանայ ու իր հետ պսակւի: Առաւոտները, երբ թագաւորի տղան որսի էր գնում իր ծառաներով շրջապատւած, աղջիկը աչքը չէր հեռացնում նրանից և գլուխը այնքան էր դուրս հանում լուսամուտից, որ սակեդոյն խիտ մազերը քամին ծածանում էր դրօշակի պէս, միայն թէ տղի աչքը մի կերպ իր կողմը դարձնէր, բայց տղան չէր էլ նկատում աղջկան և ետ չէր նայում:

Նա ձին չափ ձգած՝ արագ սլանում էր լուսամուտի մօտից, սնափիառ աղջկան յուսախաք թողնելով: Բայց աղջիկը միշտ ինքն իրեն մխիթարում էր.

«Վազը անպատճառ ինձ կը նայի: Մէկ որ նայէր, ամեն բան լաւ կերթայ և թագաւորի հարս կը լինեմ»:

Բարկութիւնը սովորաբար նա իր քրոջիցն էր հանում: Այն տեղն էր համառում, որ մինչև անգամ սկսում էր ծեծել նրան, երբ թւում էր իրեն թէ քոյրիկը շտապով չի կտարում իր հրամանները:

Մի առաւօտ, չարացած վեր կենալով իր անկողնից, նա կոպիտ ձայնով կանչեց.

—Կաղլիկ, գնա շուտով, ինձ համար կաթգնիր: Շուտ վազիր, կաղլիկ:

Խեղճ կաղլիկը փողոց շտապեց և կաղալով դիմեց կաթնատուն, մէկ էլ փողոցի անկիւնի ետևից արագ, ձին քշելով երևաց թագաւորի տղան իր ընկերների ու ծառաների հետ:

Աղջիկը այնպէս վախեցաւ, որ սօթ ընկաւ և գետնին փուեց: Նրա ձիչը լսելով, թագաւորի որդին ժամանակին ձիու գլուխը պահեց, կանգնացրեց և այսպիսով փրկեց աղջկայ կեանըը: Իսկոյն նա վայր թռաւ ձիուց, օգնեց խեղճին ոտքի ելնելու և հոգատարութեամբ հարցըց.

—Մի տեղդ հօ ցաւ չը տւի:

Եւ տեսնելով որ աղջիկը կաղում է, կարծեց թէ վայր ընկնելուց էր եղել այդ. Այն ժամանակ նա աղջկայ թեր տակից բռնեց, հասցը եց մինչև կաթնատուն և յետոյ այնտեղից մինչև տուն:

Մեծ քոյրը արդէն արագ իջնում էր սանդուխտից, որ այս աջող դէպքը ձեռքից բաց չը թողնի: Հաւատացած էր որ թագաւորի տղան այժմ արդէն իրեն նկատելու է, և պատրաստում էր երիտասարդին շնորհակալութիւն յայտնել ու կրկնում էր արդէն այն խօսքերը, որով պիտի նրան դիմաւորէր, նոյնիսկ արդէն մտածում էր թէ ինչպէս աւելի գեղեցիկ նրան զլուխ տայ: Բայց երբ ցած իջաւ, թագաւորի տղան արդէն ձին էր նստել ու անհետացել էր միւս փողոցում:

Երևակայեցէք, թէ ինչպէս նա զայրացաւ: Ամբողջ օրը ոչ մի բանից բաւական չէր, ոչ մի բանով չէր կարելի սիրտը շահել: Ամեն ըոպէ կատաղած կանչում էր:

— Կաղլիկ, կաղլիկ: Անձոռնի կաղլիկ:

Խեղճը սկսեց լաց լինել:

— Սիրտդ մի կոտրի, — ասում էր տատը. — Աստած քեզ կօդնի:

Տատը, որ շատ պառաւ էր, շուտով հիւանդացաւ ու տեղերը մտաւ: Զգալով որ մահը մտենում է, կանչեց մեծ թոռանն ու ասաւ:

— Քո խնամքին եմ թողնում խեղճ քըոջդ: Այսուհետեւ, երբ ես էլ չեմ լինի այս աշխարհիս երեսին, աւելի բարի եղիք նրա հետ: Նա սիրող և բարի հոգի ունի և իզուր ես նրա վրա չարանում: Մէկ բան էլ եմ խնդրում քեզանից մի կանչի նրան «կաղլիկ»:

— Բայց միթէ ուղիղ չէ որ նա կաղ է, — պատասխանեց թոռը, — ես հօ չեմ այդ հնարել:

— Գիտե՞ս ինչ. կը գայ մի օր, երբ ինքդ կուզենաս լինել կաղլիկի տեղը:

Եւ տատը մեռաւ:

Երբ աղջիկները մնացին մեն-մենակ, աւադքոյրը աւելի սկսեց քիթը վեր քաշել, իրեն ամբողջ տան տէրը համարելով: Եթէ տատը խնդրած լինէր աւելի պահանջող ու անարդար լինել դէպի կրտսեր քոյրը, դրանից վատ վարւել չէր կարողանայ: Խեղճ կաղլիկը գիշեր ցերեկ արտասուբ էր թափում:

Աւագ քոյրը միշտ մետաքսէ շորեր էր հագնում, կրում էր թանկագին մանեակներ, մատանիներ և աղամանտի օղեր, իսկ կաղլիկը պիտի կոշտուկոպիտ շորեր հագնէր, խօիրից կարւած: Եւ տան մէջ ամեն ըոպէ կարելի էր լսել.

— Կաղլիկ, Էյ կաղ անպիտան: Կաղ վհուկ:

Խեղճը անտրառունիջ կատարում էր մեծ քրոջ բոլոր հրամանները: Միայն գիշերներով, իր նեղ-

լիկ, մութ խցիկում, նա սկսում էր կամաց կամաց լաց լինել սւ աղերսել.

—Տատի, տատի ջան, խղճա ինձ, տատի:

Մի օր առաւօտ, սանդուխտից իջնելիս, նա աստիճաններից մէկի վրա տեսաւ մի բան, որ մէկ անգամից ջոկել չը կարողացաւ: Նա վերցրեց այդ բանը և տեսաւ որ մի ճմռած, ոտնակոխ արած ալ ծաղիկ է, որից հրաշալի հոտ էր բուրում, կարծես դրախտի անուշահոտութիւնը լինէր: Աղջիկը վրայից փոշին և կեղտը թափ տւաւ, թերթիկներն ուղղեց ու ցողունը և ծաղիկը իր կրծքին ամրացրեց: Կաթնատնից տուն վերադառնալով, նա ծաղիկը դրաւ մի ջրամանի մէջ սեղանի վրա իր խցում և երբեմն գալիս էր նրան նայելու: Այդ ջրամանի մէջ ծաղիկը կարծես կենդանացաւ և ամբողջ սենեակը լցրեց անուշահոտութիւնով:

Երբ մեծ քոյլը պոռում էր—«Կաղիկ: Անպիտան կաղլիկ: Կաղ վհուկ», —խեղճը, ինքն էլ չիմանալով թէ ինչու, գալիս էր իր ծաղիկն մտիկ տալիս և իրեն մխիթարւած էր զգում:

Կէս գիշերին մօտ, անկողին մտնելիս լաց եղաւ և ասաւ.

—Տատի, տատի ջան, խղճա ինձ, տատի:

Յանկարծ, լսւեց մի բարակ, բարակ ձայն, որ մեղմ և քնքուշ շշնջում էր.

—Ես անպատճառ կը հոգամ քո մասին, անպատճառ կը հոգամ:

Աղջիկը վախեցաւ և ճրագը վառեց: Բայց սենեակում մարդ չը կար: Եւ այդ ձայնը տատիկի ձայնը չէր:

—Երեկի ականջիս սխալ թւաց:

Եւ աղջիկը մոմը հանգցըրեց ու քնեց:

Միհնոյնը կրկնւեց մի քանի գիշեր իրար ետեից: Բայց այժմ աղջիկը չէր վախենում, երբ լսւում էր այդ բարակ, բարակ, մեղմ ու քնքուշ ձայնը, որը կարծես հեռուից էր գալիս: Միհնչ իսկ մէկ անգամ, գիշերը նա այնքան արիացաւ, որ հարցըրեց:

—Աստծու սիրուն ասա ինձ, ով ես դու: Արդեօք տատիկիս ձայնը չես:

Բայց պատասխան չը ստացաւ:

Արդէն մի ամիս էր անցել, իսկ ալ ծաղիկը ջրամանի մէջ մնում էր միշտ թարմ ու կանաչ, կարծես նոր էին պոկել: Ջրամանի մէջ աղջիկը ջուրը օրէնը երկու անգում էր փոխում: Նա շատ զարմանում էր, որ ծաղիկը այնպէս երկար էր թարմ մնում, և սկսեց մտածել, կախարդւած հօչէ և նրա ձայնը չէ արդեօք, որ ամեն գիշեր ինքը լսում է:

Դրա համար էլ յաջորդ գիշերը, հէնց որ լսւեց՝ «Ես կը հոգամ քո մասին», նա իսկոյն հարցըրեց:

—Աստծու սիրուն հարցնում եմ քեզ, ով
ես դու:

Բայց կը կին պատասխան չը ստացաւ:

Առաւօտեան աղջիկը, զարթնելով, սկսեց
աջ ու ձախ շօշափել, որ շորերը գտնիւ Գտնելով
իսկոյն նկատեց որ կտորը բոլորովին ուրիշ է:
Նա բաց արաւ լուսամուտի փեղկերը և ի՞նչ տե-
սաւ: Աթոռի վրա անկողնու մօտ ծալած դրւած
էր բոլորովին նոր մի շոր, այնպէս շքեղ ու զար-
դարուն, որ խեղճը մի քանի ըոպէ կանգնած
մնաց բերանը բաց, չը համարձակւելով ձեռք
տալ այդ շորին:

Ինքը հագաւ իր բոլորովին հին, մաշւած
շորերը՝ արմունկները կարկտնած, իսկ այդ գե-
ղեցիկ, տօնական շորը պահեց պահարանում,
բրոջ աչքից հեռու:

Միւս առաւօտ աղջիկը զարթնելով էլի որո-
նում էր շօշափելով իր հին շորը, բայց նկատեց
որ կտորը բոլորովին ուրիշ է: Նա բաց արաւ
լուսամուտի փեղկերը և ի՞նչ տեսաւ: Աթոռի
վրա անկողնի մօտ ծալած դրւած է մի ուրիշ
նոր շոր, առաջինից աւելի գեղեցիկ և աւելի
թանկագին, հէնց այնպիսին, ինչպիսին կը սազէր
մի թագուհու:

Որոնելով իր սնդուկում, նա գտաւ մի ա-
ւելի հին ու կարկտնած շոր քան թէ այն էր,
որ ամեն օր գործ էր ածում, և հագաւ:

Իսկ նոր շորը պահեց պահարանում քրոջ աչքից
հեռու:

Իսկ քոյրը, որը նրա վրա ոչ մի ուշադրու-
թիւն չէր դարձրել նախորդ օրը, տեսնելով հի-
մա նրա վրայի պատառուած և մաշւած շորը,
սկսեց նրան հայնոյել:

—Կեղտոտ կաղլիկ, ի՞նչ արիր երեկւայ շորդ:
—Տւի լւանալու:

Քոյրը բաւականացաւ այս պատասխանով
և նստեց լուսամուտի մօտ:

Մի քանի ժամանակից ի վեր նկատել էր, որ
թագաւորի տղան, ձիով տան մօտից անցնե-
լիս, նայում էր իրենց պատուհաններին, կար-
ծես մէկին որոնելիս լինէր ու չէր գտնում:

Նա աչքը ման էր ածում բոլոր լուսամուտ-
ներով, ապա գժգոհ ցած խոնարհում:

«Գուցէ ստիպւած է այնպէս անել իբր թէ
ինձ չի նկատում, իր հօրից, թագաւորից վա-
խենալով», —մտածում էր սնափառ աղջիկը:

Եւ օրէցօր նրա գոռոզութիւնը մեծանում էր:

Հէնց այդ օրն էլ թագաւորի որդին, նրանց
տան մօտից անցնելիս, ըստ սովորութեան աչքը
բարձրացը եց դէպի լուսամուտները, կարծես մէ-
կին որոնելիս լինէր ու չէր գտնում, յետոյ դըժ-
գոհ ցած խոնարհեց, ձիուն խթեց և արագ սլա-
ցաւ:

Այդ բանից յետոյ մեծ քոյրը այնքան ան-

տանելի, չարացած էր վարւում կաղի հետ, որ խեղ-
ճը սկսեց լաց լինել և կանչեց:

— Այս տատի ջան, դու ինձ բոլորովին
մոռացար:

Իսկ մեծ քոյրը կատաղած օձի պէս ֆըշ-
շում էր:

—Մէկ սպասիր, եսքեզ տատի ցոյց կըտամ:

Եւ այնպէս սկսեց ծեծել, որ խեղճի մար-
մինը քանի քանի տեղ կապուտկեց:

Գիշերը կաղլիկը սկսեց լաց լինել և կրկնել.

— Տատի, տատի ջան, գոնէ դու իմ մա-
սին հոգա:

— Կը հոգամ, անպատճառ կը հոգամ, — պա-
տասխանեց ձայնը:

Առաւոտը զարթնելով խեղճ աղջիկը սկսեց
շօշափելով իր շորը որոնել և նկատեց որ կտո-
րը ուրիշ է: Փեղկերը բաց արաւ, և ինչ տեսնի:
Աթոռի վրա, անկողնի մօտ նորից ծալած դըր-
ւած էր մի նոր շոր, երրորդը, ամբողջովին ոս-
կեկտոր և ականազարդ: Հաղիւ թէ թագուհին մի
այդպիսի շոր ունենար:

Այս անգամ իզուր էր էլի մի հին շոր որո-
նում իր սնդուկի մէջ: Կաղլիկը տեսաւ, որ էլ
հազնելու բան չունի:

«Ի՞նչ անեմ, որ քոյրս չը նկատի»:

Աղջիկը չէր համարձակւում իր երեք նոր շո-
րերից մէկն ու մէկը հազնել այնքան շքեղ ու
պմանազարդ էին:

Մինչդեռ այսպէս մտածում էր, մեծ քոյրը
գոռում էր:

— Կաղլիկ, անպիտան կաղլիկ: Հօ չես խլա-
ցել, վհուկ:

Եւ կատաղած մէկ էլ ներս ընկաւ սենեակը:

Բայց տեսնելով մի այդպիսի, իսկ թագա-
ւորական շքեղ շոր, կարծես տեղնուտեղը քա-
րացաւ:

— Այդ ում շորն է:

— Զը գիտեմ:

— Ո՞վ տւաւ քեզ:

— Զը գիտեմ:

— Ինչու միայն տակի շորով ես:

— Ուրիշ հազնելու բան չունեմ... իմ շորը
տարել են:

— Անպիտան կաղլիկ, չը լինի թէ կարծում ես
որ կարող ես խարել ինձ:

Քրոջը հանգստացնելու համար խեղճ աղջի-
կը շտափեց նրան պատմել թէ ինչպէս եղաւ այդ
ամենը: Պատմեց և ալ ծաղկի մասին, և այն ձայնի
մասին, որ ամեն գիշեր լսում էր, և ուրիշ երկու
շորերի մասին, որ գտել էր աթոռի վրա ան-
կողնի մօտ իր հին շորերի փոխարէն, և ցոյց
տւաւ շորերը:

Բայց քոյրը չէր ուզում հաւատալ:

— Անպիտան կաղլիկ, չը կարծես թէ կա-
րող ես ինձ յիմարացնել:

Եւ բոլոր շորերն ու ալ ծաղիկը ծաղկամանով խեց տարաւ իր սենեակը.

Կաղլիկը հագաւ քրոջ հին շորը. այդ շորը վրան այնքան լայն էր, որ խեղճը աւելի տղեղ էր երկում, քան թէ իսկապէս էր:

—Ես ինքս ամեն բան կը փորձեմ, ասաւ քոյրը:

Եւ յաջորդ գիշերը, մոմը հանգցնելով, շնչաց.

—Տատի, տատի ջան, հոգա իմ մասին:

—Կը հոգամ, անպատճառ կը հոգամ,—պատասխանեց ձայնը.

Աղջիկը սաստիկ զարմացաւ,

—Ուրեմն կաղլիկը սուտ չէր ասում,—մտածեց նա:

Զարթնելով առաւօտեան՝ նա շօշափելով որոնում էր իր շորը: Իսկոյն նկատեց որ կտորը ուրիշ է: Փեղկերը բաց արաւ և ինչ տեսնի:

Աթոռի վրա անկողնի մօտ ծալած դրւած է հին, շատ հին չթէ մի շոր, պատուած ու կարկըտնած: Իսկ պահարանում, որտեղ նա կախ էր արել երեք հարուստ և շքեղ շորերը, մէկը պակաս էր, ամենալաւը:

—Ախ, կաղ վհուկ: Այդ քո արածն է:

Եւ չար աղջիկը սաստիկ ծեծեց իր խեղճ քրոջը, այնքան որ մարմինը քանի քանի տեղ կապուտկեց:

Եւ այնուամենայնիւ էլի մէկ անգամ ուղում էր բախտը փորձել:

—Տատի, տատի ջան, հոգա իմ մասին:

—Կը հոգամ, անպատճառ կը հոգամ:

Մէծ քոյրը յուզմունքից ամբողջ գիշերը չէր քնած և անչափ ուզում էր, որ շուտով լուռանայ և կարողանայ տեսնի, չը լինի՞ թէ միենոյն բանն է կատարել, ինչ որ նախորդ օրը:

Բայց աւելի վատ բան պատահեց. Աթոռի վրա անկողնի մօտ նա գտաւ հին, փթած կեղեւից կարած մի շոր: Իսկ պահարանի մէջ նորից պակաս էր մէկը թանկագին շորերից:

—Ախ, կաղ վհուկ: Այս քո արածն է:

Եւ նորից ծեծեց հա ծեծեց խեղճին, այնքան որ մարմինը քանի քանի տեղ կապուտկեց:

Յամառութիւնից չար աղջիկը էլի մէկ անգամ ուղում էր փորձել: Բայց յաջորդ առաւօտ ոչ միայն ոչինչ չը գտաւ ոչ աթոռի վրա, ոչ պահարանում, բայց և կարմիր ծաղիկն էլ անհետացել էր ջրամանից, մի այնպիսի զգւելի հոտթողնելով սենեակում, որից ուղղակի սիրտը խառնում էր:

—Ախ, կաղ վհուկ: Այս ամենը քո արածն է:

Եւ նորից ծեծեց հա ծեծեց խեղճին, այնքան որ մարմինը քանի քանի տեղ կապուտկեց:

Մի օր էլ չէր անցել այդ բանից յետոյ, որ

լուր տարածւեց թէ թագսւհին մեծ կորուսա
է ունեցել, չէին կարողանում գտնել նրա ամենա-
թանկագին շորերից երեք ամենագեղեցիկները:
Ամբողջ պալատը իրար անցաւ: Թագաւորն ու թա-
գուհին զայրացած էլ չէին գիտի թէ ինչ անեն.
վախեցած պալատականները գլուխը կորցը էլ էին:
Թագաւորը բոլորին խորհրդի հրաւիրեց:

—Եթէ երեք օրից գողին չէք գտել, բոլո-
րիդ էլ կողքէկողք կախ կը տամ:

Արդէն երկու օր էր անցել և խեղճ նազիր
վեզիրներն արդէն ձեռքը պարանոցներին էին տա-
նում թէ արդեօք գլուխները դեռ վիճաներն է, —
բայց գողի հետքն անգամ չէր երևում.

Եւ թագաւորը յայտարարեց:

—Վաղը առաւօտեան կը հրամայեմ բոլո-
րիդ կողքէկողք կախ տալ:

Նազիր-վեզիրները որոշեցին քաղաքի գար-
պանների մօտ պահապաններ կանգնեցնել և բո-
լոր տները խուզարդել: Ոստիկանները ամեն տեղ
տակն ու վրա արին, բայց ոչինչ չը գտան:

Եկան և երկու քոյլերի տունը: Այստեղ էլ
ամեն բան նայեցին, քըբըեցին և տակն ու վրա
արին, բայց ոչինչ չը գտան: Իսկ մեծ քոյլը
ոստիկաններից ծածուկ կաղի ականջին էր
փսփսում:

—Այս դնւ ես, կաղ վհուկ, դնւ ես մեղ խայ-
տառակողը:

Խեղճ կաղլիկը այսպէս սարսափեց ոստի-
կաններին տեսնելուց, որ ոչ մի խօսք չէր կա-
րողանում ասել: Միայն ինքն իրան մտքում
կըկնում էր.

—Տատի, տատի ջան, դու ինձ ողահապան
լինես: Դու գոնէ ինձ պահապան լինես:

Եւ նոյն իսկ քրոջ համար էլ էր աղաչում
տատիկին:

Ոստիկաններից մէկը, որ իր ընկերներից
աւելի կասկածու էր, մեծ քրոջ անկողինը շուռ
ու մուռ տւառ և ասաւ.

—Ապա քանդեցէք անկողինը:

Անկողնի կարը քանդեցի և բրդի մէջ
պահած գտան թագուհու երեք թանկաղին շորերը,
հէնց այն շորերը, որ կաղլիկը գտել էր իր
անկողնի մօտ աթոռ վըա:

—Սա է գողը, սա է գողը, —ծւռում էր մեծ
աղջիկը:

Բայց ոստիկանները երկուսին էլ բռնեցին,
ձեռները կապկապեցին և բանտը ձգեցին: Կաղլի-
կը նոյն իսկ լաց լինել չէր կարողանում. նա
շշմած նայում էր իր շուրջը: Իսկ մեծ քոյլը
խելազարի պէս էր: Անդադար կանչում էր.

—Սա է գողը: Սա է գողը.

Բանտում նըանց զանազան խցերում նըս-
տեցրին:

Մթնի մէջ նստած, կաղլիկը ձեռները ծա-
լել՝ աղօթում էր.

—Ախ, տատի, տատի ջան, հոգա իմ մասին:

—Կը հոգամ, անպատճառ կը հոգամ:

Խեղճ երեսը դարձրեց այն կողմը, որտեղից լսւում էր ձայնը, և տեսաւ մթնի մէջ ալ ծաղիկը, որ փայլում էր կէծացած ածուխի պէս: Կամաց-կամաց այդ լոյսը մեծանում էր ու մեծանում, այնպէս որ վերջապէս լուսաւորեց ամբողջ սենեակը: Եւ այդ փայլի մէջ երեաց մի չքնաղ կին, որի ոտները գետնին չէին դիպչում: Կարծես, թէ ինքը, թէ իր շորը, թէ ամենը նրա շուրջը հիւսւած էր ամենապայծառ շողերից:

—Ես Թիօրէ (ծաղիկ) փերին եմ: Ինձ այդպէս են կոչում նրա համար, որ ես մէկ ամիս ապրում եմ իրեն մարդ, միւս ամիս իրեն ծաղիկ, այդպէս է ինձ վիճակւած: Դու ինձ գետնից բարձրացըրիք, մաքրեցիք փոշուց և կեղտից, օրական երկու անգամ ջուրս փոխում էիք և փրկեցիք աւանջանքներից ու չարչարանքներից: Իսկ հիմա ես եկայ քեզ փրկելու:

Այս առելով փերին անհետացաւ:

Առաւտեան, երբ Թագաւորի որդին պատրաստում էր ձի հեծնելու, տեսաւ գետնի վրա մի ալ ծաղիկ: Նրա ուղեկիցներից մէկը այն է ուղում էր ոտքը տանել և կոփել ծաղիկի վրա:

—Զգնյշ, զգնյշ, —կանչեց թագաւորի տղան: Նա ալ ծաղիկը գետնից առաւ և հիացաւ

նրա՝ խելքը թոցնող անուշահոտութիւնից:

Իսկոյն յիշեց նա այն կաղլիկին, որի պատկերը մտքիցը չէր ընկնում այն օրից, երբ նրան վեր էր քաշել ու կեանքը փրկել, ինչպէս այդ ըովէին փրկել էր ալ վարդի կեանքը: Այն աղջիկը թւացել էր իրեն այնքան բարի, այնքան դուրեկան... Եւ այն օրից նրան այլ ևս չէր տեսել, Բայց տղան չէր կարող ինքն իրեն բացատրել թէ ինչու էր այնպէս յաճախ նրա մասին մտածում, թէկ միայն մէկ անգամ էր նրան տեսել:

Թագաւորի տղան ալ վարդը անցկացըեց կոճկատեղում և երբ տուն վերադարձաւ, դրաւ մի ջըամանի մէջ իր սենեակում: Եւ այդ ծաղկի անունը դրաւ «կաղլիկի ծաղկի»:

Գիշերը, երբ ուղում էր արդէն քուն մտնել, յանկարծ նա լսեց ինչ որ ձայն: Իսկոյն մոմը վառեց և ապշած իր շուրջը նայեց. ոչ ոք չը կար սենեակում:

Մի քիչ յետոյ կրկին լսեց:

—Շըշ... շըշ... շըշ...

—Ո՞վ ես: Ի՞նչ ես ուղում ինձանից:

—Ես Թիօրէ փերին եմ: Լոիր, լաւ լոիր

թէ ի՞նչ եմ քեզ պատմելու։ Միայն թէ մոմը
մի վառի։

Եւ ֆէօրէ փերին պատմեց թագաւորի
տղին կաղլիկի տխուր պատմութիւնը։

Նրա պատմութեան վերջը տղան լաց եղաւ։

Նա հազիւ սպասեց մինչև որ լուսացաւ, և
իսկոյն գնաց ընկաւ հօր ոտները։ Նա մէկ մէկ
ետ պատմեց Ֆիօրէ փերիի խօսքերը և սկսեց
աղաչել։

--Հայրիկ, իմ հայրիկ, թոյլ տուր պսակւեմ
այդ աղջկայ հետ։ Թո հարսը հէնց այդ խեղճը
պիտի լինի։

Թագաւորը ոչ այն էր ասում, ոչ ոչ։ Բայց
երբ նրան թւաց թէ ժամանակ էր, նա հրա-
մայեց։

--Բերէք այստեղ երկու գողերին էլ։

Ոստիկանները գնացին բանոը նախ մեծ
քըոջը բերելու։ Հիմա, մազերը գզզած
և չարութիւնից ծուած դէմքով, նա ոչ թէ ա-
ռաջւայ գեղեցկուհին էր, այլ մի սոսկալի վհուկի
նման։ Զեռները շղթայեցին և քաշ տւին թա-
գաւորի մօտ։

Յետոյ ոստիկանները գնացին փոք-

րիկին բերելու։ Բանտի խցի դուռը բաց անելով
նրանք ապշած կանգնած մնացին շեմքին։ Մութ,
կեղտոտ սենեակը դարձել էր մի հոյակապ ծաղ-
կած պարտէզ և նրա մէջտեղ կանգնած էր կաղ-
միկը, այնքան գեղեցիկ, որ ճանաչել չէր կա-
րելի. թանկագին և շքեղ շորը հագին, ծաղիկներ
էր պոկոտում և հրաշալի փունջեր էր կապում։

—Ահա սա թագաւորի համար, սա թագու-
հու, սա էլ թագաւորի տղի համար։

Իսկոյն թագաւորն ու թագուհին շտապե-
ցին բանալը որ այստեղից կաղլիկին դուրս բե-
րեն թագաւորի հարսին վայել պատիւներով։

Հէնց որ մեծ քոյրը նրան տեսաւ, կատա-
ղեց, գժւեց ու կանչեց։

—Ախ, կաղ գող, Դու գողացար այժմ ինձ.
նից և թագաւորի տղին։ Սև մահով մեռնես,
գետինը մտնես, կաղ գող։

Բայց նրա տեղ ինքը կորաւ, որովհետեւ թա-
գաւորը չուղեց նրան ներել։ Թագաւորը սաստիկ
զայրացել էլ որ մինչև վերջ չար աղջիկը այն-
քան գազագած էր իր բարի քրոջ դէմ, մինչդեռ
քոյրը միայն այն էր անում, որ աղաչում պա-
ղատում էր նրան ներել։

Թագաւորի հարս դառնալով, կաղլիկը, որը
կախարդի շնորհիւ դադարել էր որ կաղալուց, այ-
նուամենայնիւ կամենում էր իրեն շարունակեն
«կաղլիկ» կանչել անցեալի յիշատակին։ Նոյն-
իսկ մեծ հանդէսներին, երբ ժողովրդի աչքին
էր երևում, դիտմամբ նազանի ձեացնում էր իբր
թէ ճշմարիտ կաղում է։

ԱՍԵՂ

Կար չը կար մի գերձակ։ Ապրում էր միայն
նրանով, որ կարկտնում էր կամ շուռ էր տալիս
մաշւած շորը։

Նրա փոքրիկ արհեստանոցի մէջ հազիւ էր
արեկի լոյսը թափանցում։ Այդ պատճառով նա
միշտ ակնոցը քթին աշխատում էր իր խանութի
դռանը։ Երբ նա թելն էր քաշում, նա երգում էր։

Սև օրս կանցնի,
Արևս վառ լոյս կը տայ,
Զան, ջան, ջան...

Դերձակը մի աղջիկ ունէր, որ սիրուն էր
արեկի շողքի պէս։ Նա կոնատ էր, և գա հօր հա-
մար մեծ անբախտութիւն էր։ Հարևանները օգ-
նում էին աղջկան տանը։ այսօր մէկը, վաղը
միւմն էր գալիս, տունը աւելում, հաւաքում,
աղջկան հազցնում, գլուխը սանրում, երեսը
լւանում, իսկ դերձակը ուտելու ժամանակ պէտք
է ինքը նրա բերանը կտորները դնէր։ Եւ ամեն
անդամ քթի տակ փընթփընթում էր։
—կոնատը և անբերան պիտի ծնւի։

Հօր անդադար փընթփընթոցին աղջիկը
միայն ժպտում էր և ասում.

— Զէ որ, հայրիկ, ես մեղաւոր չեմ, որ այս-
պէս այլանդակ եմ ծնւել:

— Ճշմարիտ ես ասում, իմ աղջիկս:

Եւ ծերունին նորից բանի էր նստում և եր-
գում էր:

Սև օրս կանցնի,
Արևս վառ լոյս կը տայ,
Ջան, ջան, ջան...

Իսկ օրէցօր աւելի ծանր ժամանակներ էին
գալիս: Ծերունին սկսել էր աչքի լոյսը կորցնել:
Ակնոցը արդէն չէր օգնում: Նրա խոշոր-խոշոր
կարից կարկատաններն էլ անձոռնի էին երեսում,
և այդ բանը տեսնելով պատիրատուները դա-
դարեցին գերձակին գործ տալուց.

— Իմ անուշ աղջիկս, հիմա ի՞նչ պիտի անենք:

— Աստւած ողորմած է:

— Արևս վառ լոյս կը տայ...

Իր հին սովորութեան համեմատ ծերունին
խանութը բանալով, ամեն առաւօտ նստում էր
դուանը ձեռները ծալած և սպասում էր պատի-
րատուններին, որոնք սակայն չէին երեսում: Եւ
առաջւայ պէս նա միշտ իր երգն էր երդում.

Սև օրս կանցնի,
Արևս վառ լոյս կը տայ,
Ջան, ջան, ջան...

Մի օր անցնում էր մի տիկին, կուցաւ ու

գետնից բարձրացրեց մի փայլուն ասեղ:

— Այս քն ասեղն է, ծերուկ:

— Շնորհակալ եմ, տիկին: Բայց ի՞նչ պիտի
անեմ ասեղը: Աչքս վատ է ջոկում և չեմ կա-
րողանում այլս կարել:

Խօսակցութեան ձայնը լսելով գերձակի աղ-
ջիկը մօտեցաւ խանութի դռանը:

— Գեղեցկուհի, գոնէ դու առ այս ասեղը:
— Ես ձեռք չունեմ:

— Տես, ես ասեղը քո շորերի մէջ կը ցցեմ:
Լաւ ասեղ է:

— Ախ, այդ միևնոյն է թէ անատամին կա-
ղին տան, ասեն թէ ատամով կոտրի: Աշխար-
հիս երեսին միշտ այդպէս է լինում:

— Յոյսդ մի կորցնի, ծերուկ:

Սև օրս կանցնի,
Արևս վառ լոյս կը տայ
Ջան, ջան, ջան...

Երգելով այս երգը, տիկինը ծիծաղելով ճամ-
փան շարունակեց և անհետացաւ աղջկայ աշ-
քից:

Մի քիչ յետոյ երևաց մի պատիրատու-
բոլորովին պատառ-պատառ եղած, զզգւած վե-
րաբերուն ձեռքին, և ասաւ.

— Կարկանեցէք այս իմ վերաբերուն: Ես
առաջուց կը վճարեմ: Ահա ձեզ, վաղը կը գամ,
կը վերցնեմ:

Դերձակը, տեսնելով փողը, որ հէսց ժամանակին վրա հասաւ, սիրտ չառաւ ասելու, «Ես այլես չեմ տեսնում և չեմ կարողանում կարել»: Նա մնաց զարմանքից բերանը բաց թէ որտեսեղից էր այդ բաղդը:

Իսկոյն գնաց բան ման գնելու: Յետոյ սկսեց ապուր եփել և ինքն իրեն մտածում էր պատկրատւի մասին:

—Իմ անուշ աղջիկս, իսկ վաղը ի՞նչ պիտի անենք:

—Վաղը կը տեսնենք, քսան ու չորս ժամ դեռ ունենք մտածելու:

Ճաշելով աղջիկը պատահմամբ մտիկ տւաւ վերաբկուխն ու զարմանքից կանչեց: Վերաբկուն կարկանած, նորոգւած էր, կարծես բոլորովին նորը լինէր: Աջ թեքի մէջ ցցւած էր ասեղը,

—Այն տիկնոջ ասեղն է:

Ճիշտ որ, այն ասեղը այլիս աղջկայ շորի մէջ չէր, ուր ցցել էր տիկինը:

—Կամաց, աղջիկս: Այս ասեղը մեր բախտն է:

Վերաբկուի տէրը եկաւ և շատ զոհ մնաց գործից: ով որ տեսնում էր այդ գործը, հիանում զմայլում էր:

Եւ ահա պատկրատուները սկսեցին լցւել դերձակի խանութը: Այնտեղ, նստարանի վրա միշտ մի ամբողջ կոյտ էր կիտւած լինում հին, մաշւած, քըքըւած շորերի: Դերձակը ամբողջ օրը

նստած էր իր դռանը ձեռները ծալած, և երգում.

Սև օրս անցաւ,

Արևս վառ լոյս տւաւ,

Զան, ջան, ջան:

—Ծերուկ, ապա ով է բեզ մօտ աշխատում:

—Ո՞վ է աշխատում: Ե՞ս:

—Դուն առջեւ նստած, ձեռները ծալած:

—Այս, դռան առջեւ նստած, ձեռները ծա-

լած:

Երեկոյեան դէմ պատկրատուները գալիս էին, և միշտ շորերը պատրաստ, նորոգւած էին գտնում:

Կարկատաններն ու նորոգութիւնները այնպէս սիրուն էին արած լինում, որ շոր բոլորովին նոր էր երեսում:

—Ծերուկ, ով է այս գործն արել:

—Ե՞ս, ասում եմ:

—Դուն առջեւ նստած, ձեռները ծալած:

—Այս, դռան առջեւ նստած, ձեռները ծա-

լած:

Մի օր թագաւորի տղան՝ իր զինակը հետայր դերձակի խանութի առջեց անցնելիս, տեսաւ նրա աղջկան, որ նստած էր դռան առջեւ, հօր կողքին:

Տղան հիացաւ աղջկայ գեղեցկութիւնից:

—Ի՞նչ գեղեցիկ է, կարծես թագուհի լինի:

—Բայց կոնատ է, ջահէլ տղայ:

—Ալ, ափսոս:

Ամբողջ գիշեր թագաւորի տղան շարունակ մտածում էր դերձակի աղջկայ մասին և միւս օրը կամեցաւ նորից նրան տեսնել: Իր զինակրի հետ միասին նա անցաւ դերձակի խանութի մօտից և երէկւանից աւելի հիացաւ աղջկայ գեղեցկութիւնից:

—Իսկոր թագուհին է: Ափսոս, ինչ ափսոս որ կռնատ է:

Էլի ամբողջ գիշեր թագաւորի տղան մտածում էր դերձակի աղջկայ մասին և միւս օրը նորից կամեցաւ նրան տեսնել: Զիով դերձակի խանութի մօտից անցնելիս, նա ձին կանգնացրեց:

—Այդ ի՞նչ ես երգում, բարի ծերուկ:

Սև օրս անցաւ,

Արևս վառ լոյս տւաւ,

Ջան, ջան, ջան...

Իսկ այդ միջոցին թագաւորի տղան աչքը չէր հեռացնում աղջկանից:

Դերձակը, որ չը գիտէր թէ դա թագաւորի տղան է, կանչեց.

—Էյ, դու, բարեկամ: Այդ ժւմն ես նայում:

—Նայում եմ աղջկադ, որ կարմիր արեգակից գեղեցիկ է:

—Եթէ որ արեգակից գեղեցիկ լինէր, դու կը կուրանայիր:

—Օյ, օյ, օյ:

Թագաւորի տղան ձեռները աչքերին տարաւ: Հենց որ դերձակը այն խօսքերն էր ասել, տղայի աչքերը մթնել խաւարել էին, նա կուրացել էր:

Զինակիրը ձեռքից բռնած տարաւ կոյր թագաւորի տղին պալատ ու մէկ մէկ պատմեց բոլորը նրա ծնողներին:

Թագաւորն ու թագուհին զայրացան դերձակի վրա:

—Ծեր կախարդ, բռնեցէք ու թրկ տւէք այստեղ:

Խեղճ դերձակին գողից աւելի վատթար կապկըցին և թրկ տւին թագաւորի մօտ:

—Զերդ մեծութիւն, ես մեղաւոր չեմ:

—Ծեր կախարդ: Աչքի լոյսը վերադարձրն մեր աղին, թէ չէ կենդանի կենդանի խորովել կը տամ քեզ:

Սարսափից խեղճ դերձակը խելքը կորցը էր.

—Զերդ մեծութիւն, ես մեղաւոր չեմ:

—Քեզ երեք օր եմ տալիս մտածելու:

Եւ թագաւորը հրամայեց բանտ ձգել դերձակին, թագաւորական պալատի նկուղը:

Ամեն առաւօտ թագաւորը գնում էր այնտեղ դերձակի մօտ և լուսամուտի վանդակի միջով ասում էր բանտարկւածին:

—Աչքի լոյսը վերադարձրն մեր տղին, թէ չէ կենդանի կենդանի խորովել կը տամ քեզ:

Արդէն առաջին օրը անցաւ:

—Աչքի լոյսը վերադարձրու մեր տղին, թէ
չէ կենդանի կենդանի խորովել կը տամ քեզ:
Երկրորդ օրն էլ նոյնպէս անցաւ:

Խեղճ դերձակը բան չէր պատասխանում:
Նա միայն արտասուքի հեղեղներ էր թափում,
մտածելով իր կռնատ աղջկայ մասին, որից ոչ
մի լուր չունէր և որը այժմ պիտի անտէր ան-
տիբական, մենակ մնար աշխարհիս երեսին:

—Խեղճ իմ աղջիկ:

Իսկ թագաւորը ասում էր լուսամուտի վահ-
դակից:

—Աչքի լոյսը վերադարձրու մեր տղին, թէ չէ
կենդանի կենդանի խորովել կը տամ քեզ:

Անցան բոլոր երեք օրերն էլ:

—Չերդ մեծութիւն, ես մեղաւոր չեմ: Նե-
րեցէք, ձերդ մեծութիւն: Գոնէ մեռնելուց առաջ
թոյլ տւէք տեսնեմ իմ աղջկայ հետ:

Թոյլարւեց:

Թագաւորն ու թագուհին, որոնց ականջին
հասել էր աղջկայ գեղեցկութեան համբաւը, կա-
մեցան նրան տեսնել, երբ նա պալատը կը գայ:

Հենց որ աղջիկը դահլիճը մտաւ, որտեղ
թագաւորն էր թագուհու և իր տղի հետ, տղան
ուրախութիւնից ծափ տւաւ և կանչեց:

—Ես նրան տեսնեմ եմ: Ես նրան տես-
նում եմ: Նրա կողքին էլի մի տիկին կայ:

Թագաւորն և թագուհին կարծեցին թէ

տղան խելագարւել է, որովհետեւ ոչ մի ուրիշ
տիկին աղջկայ կողքին չէին տեսնում:

—Ահա նա աղջկայ կողքին է և նրա ձեռ-
քիցն է բռնել:

—Ի՞նչպէս թէ ձեռքից, նա ձեռքեր չունի:

—Իսկ ես տեսնում եմ, որ ձեռքեր ունի:
Բայց ձեզ ես չեմ տեսնում:

Թագաւորն ու թագուհին ուզեցին համոզ-
ւել՝ ճիշտ է արդեօք որ տղան աղջկան տեսնում
է, ստիպում էին աղջկան անց ու դարձ անել
դահլիճում ոտքի պատեղների վրա: Եւ տղան հե-
տեսում էր նրան իր կոյր աչքերով ու ասում:

—Ահա նա... Այժմ նա կանգնած է պատու-
հանի մօտ... Ահա գլուխ է տալիս... Այժմ
նստեց յատակին... Հետն եկած տիկինը միշտ
նոյնն է անում, ինչ որ նա:

Աղջեցին թագաւորն և թագուհին և չը գի-
տէին թէ ինչ մտածեն այդ հրաշքի մասին:

—Ասա մեզ, գեղեցկուհի, ովք է այն անե-
րկոյթ տիկինը, որը քեզ ման է ածում:

—Չը գիտեմ, ձերդ մեծութիւն, ես մենակ
եկայ պալատ... Օյ, օյ, օյ:

Աղջիկը յանկարծ զգաց սաստիկ ցաւ այն-
տեղերում, որտեղ պիտի ձեռներ լինէին:

—Օյ, օյ, օյ,—կանչում էր նա:

Եւահա ամենքի աչքի առջև երևացին սկզբում
մատների ծայրեր, յետոյ ձեռքի թաթեր, յետոյ

արմունկները, յետոյ կամաց կամաց ձեռները,
մինչև ուսերը, գեղեցիկ, ձիւնանման ձեռները:

Մի կողմը հրելով թագաւորին և թագու-
հուն՝ նրանց տղան գլխապատառ վազեց աղջկայ
մօտ, արագ բռնեց նրա ձեռներից և սկսեց
նրանով իր աչքերին շփել:

— Հրաշալի ձեռներ, բժշկեցէք ինձ:

Բայց նա ի զուր էր շփում իր աչքերին:

— Կամաց,—ասաւ թագաւորի տղան,—այն
տիկինը ինչ որ ասում է:

Այն ամենից յետոյ, ինչ որ իրենց աչքով
օրը ցերեկով այստեղ տեսել էին, թագաւորն ու
թագուհին մի տեսակ սարսափ էին զգում այդ
աներևոյթ տիկնոջ առջև:

— Ի՞նչ է ասում:

— Նա ասում է.

Զեռներ փափուկ ու սպիտակ,
Կոյր աչքերին լոյս կը տաք,
Եթէ դառնաք դուք յաւիտեան
Իշխող ձեռներ արքայական:

Պարզ էր, որ եթէ թագաւորի տղան ուզում
էր իր աչքի լոյսը վերադարձնել, պէտք է
պսակւէր այդ աննման աղջկայ հետ:

Թագուհին չարացած էր:

— Պսակւի՞ մի դերձակի աղջկայ հետ: Ո՞չ:
Բայց թագաւորը, որ ամբողջ հոգով սիրում

էր իր որդուն, թոյլ չը տւաւ որ փերին երկրորդ
անգամ կրկնի իր խօսքերը:

— Նրա ձեռները արքայական ձեռներ կը
լինեն: Թագաւորի ազնիւ խօսքն եմ տալիս:

Եւ թագաւորի տղի աչքերը աղջկայ ձեռքի
շփումից յանկարծ բացւեցին ու դարձան ա-
ռաջւայ պէս պայծառ և գեղեցիկ:

Ի հարկէ գերձակին ազատեցին բանտից և
իսկոյն սկսեցին հարսանիքի պատրաստութիւնը
տեսնել:

Թագաւորի հարսի պէս հագնւած, իր շքեղ
և թանկագին շորերով աղջիկը ճիշտ որ պայ-
ծառ արև էր երեսում:

Բայց թագուհին չէր կարողանում հանգստա-
նալ այն մտքից, որ իր տղան պսակւում է գեր-
ձակի աղջկայ հետ, և հազար ու մի անհամու-
թիւններ էր սարքում:

Հարսանիքի օրը, առաւօտեան, աղջկան
պալատականների աչքում ստորացնելու համար,
թագուհին նրան ասաւ:

— Թագաւորի հարս, իմ թագաւորական
թիկնոցի վրա մի ծակ կայ: Ի հարկէ ոչ ոք
քեզանից լաւ չի կարողանայ նորոգել:

Աղջիկը առանց շփոթելու, գնաց առաւ
տիկնոջ տւած ասեղը և ծունկ չոքելով սկսեց
նորոգել թագուհու թիկնոցը:

Տեսնելով նրա խոնարհութիւնը, թագուհին

սկսեց աղաղակել նրա վրա իսկ թունաւոր օձի
պէս:

—Դու ասեղ բռնել չը գիտես, —կանչեց նա
և ձեռքիցը քաշեց թագաւորական թիկնոցը:

—Ճշմարիտ է, —պատասխանեց աղջիկը, —
ես իմ կեանքում ձեռքս ասեղ չեմ առել:

Իսկ ասեղը այդ միջոցին մնաց թագուհու
թիկնոցի մէջ և հարսանիքի հանդէսի ժամանակ
թագուհին զգաց որ մէկը կարում է, կարում
հա կարում միասին իր ամբողջ զգեստը, այն-
պէս որ չէր կարող ազատ շարժւել:

Իսկ ասեղը կարում էր հա կարում: Երբ ար-
դէն այլ ևս բան չը կար կարելու, սկսեց շորը
վրա կարել թագուհու մարմնին: Թագուհին աշ-
խատում էր զգեստները պատուել, բայց շորը
այնպէս ամուր էր վրա կարւած մարմնին, որ
անհնարին էր պոկել:

Իսկ ասեղը կարում էր հա կարում... Թա-
գուհին կանչում էր խելագարի պէս. զգում էր թէ
ինչպէս ասեղի սուր ծայրը ծակում էր իր մարմնը
և ոչ մի բոլէ դադար չէր անում: Ձեռները, ոտ-
ները, ուսերը — ամենը, ամենը կարում էր ա-
սեղը իրարու կարում էր առանց դադարելու,
և թագուհու ճիչը երկինք էր հասնում:

Վերջապէս, էլ չը կարողանալով գիմանալ,
թագուհին ընկաւ հարսի ոտները.

— Հարս, իմ սիրելի հարս, ներիք ինձ:
Փրկիլը ինձ:

Հարսը հասկացել էր որ բարի տիկինն է
այդ անողը, և սկսեց աղաչել.

— Բարի տիկինն, փրկիր սրան:
Նոր էր բերանից բաց թողել այս խօսքերը,
որ ասեղը դադարեց կարելուց, և ամբողջ առաջ-
ւայ կարն էլ ինքն իրան քանդւեց:

ՀՀ Ազգային գրադարան



NLA303390

«ՀԱՍՏԵՐԻ ՀՐԱՄԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ»

1. Հեղ. Մելիք-Հայկազեան. Քսան օր գետնի տակ 20 կ.
2. Օսկար Ռւայլդ, Պրինցն ու ծիծեռնակը . . . 20 »
3. Ստ. Լիսիցեան. Քաջ ճամփորդներ 25 »
4. Աթ. Խնկոյեան. Գիւղացին ու արջը 25 »
5. Ստ Լիսիցեան. Քաջ զինւորներ, պիես 8 »
6. Ռ. Պատկանեան. Զախու 20 »
7. Ստ. Լիսիցեան. Սոված գայլը 10 »
8. Կլաւդիա Լուկաշևիչ. Քեռի Մկօ 20 »
9. Կարլ Էվալդ. Երկիրն ու գիսաստղը
10. Կապուան. Ֆիօրէ փերին. Ասեղ

Ձրի յաւելւած «Հասկեր»-ի

Դիմել՝ գրավաճառներին կամ Թիֆլիս՝ Редакція
„АСКЕРЪ“

85
4-24